



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(37410) 563363, 580219,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանին
«Հետք» պարբերականի լրագրող Սեդա Ղուկասյանից

Հեռ` 055814042, էլփոստ` Ghukasyansed@gmail.com

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն՝ Մաթևոսյան,

ՀՀ Սահմանադրության 51-րդ և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալի մասին:

«Քաղաքացիական պայմանագիր» իմբակցության պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը սեպտեմբերի 17-ի խորհրդարանական ճեպագրույցներին խոսելով ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ստորագրած պատգամավորներին և ԱԺ աշխատակազմին պարզևատրվելու կարգադրության մասին հայտնել էր, որ Անկախության 30-ամյակի առթիվ պարզևատրվել են ոչ միայն պատգամավորներն ու ԱԺ աշխատակազմը, այլ ամբողջ պետական ապարատը:

Խնդրում եմ հայտնել՝ մարզպետարանի աշխատակիցները պարզևատրվել են, թե՞ ոչ, եթե այո՝ որքա՞ն է եղել պարզևատրման ֆոնդը, քանի՞ աշխատակից է այդ պարզևատրման շրջանակում գումար ստացել կամ ստանալու և պաշտոնային դրույքաչափի քանի՞ տոկոսի չափով, նաև տեղեկատվություն, թե պաշտոնային դրույքաչափի քանի՞ տոկոսի չափով է գերատեսչության ղեկավարը պարզևատրվել:

28.09.2021

Հարգանքով Մեղա Ղուկասյան



